ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

— Ուստր Մէսի հայ փոքրիկի մը անձնանուէր ազգասիրութիւնը՝ խօսիլ տուաւ ամերիկեան լրագրաց, որոնք գովեցին այդ մանկան գործը։ Սա ինն տարեկան լրագիր ծախող տղայ մը ներկայացաւ Ամերիկեան Ցանձնախումբին տեսուչ Պր. Տրուրիի և յայտնեց թէ՝ ինքն օրաթերթի վաճառումով կրցեր է խնայողաբար հաւաքել 9 տլ. 98 սենթ, որով կը փափաքէր գնել Ազատուրեան արմեր-ուղր մը։ Տղան 50 տոլարնոց արժեթուղթ մը գնեց՝ մաս առ մաս վճարելու պայմանաւ և անմիջապէս վճարեց 5 տոլար, խոստանալով մնացածը վճարել չաբթէ չաբաթ՝ օրաթերթերու վաճառումներէն չահած դրամով։ Միաժամանակ տղան Պր. Տրուրիի յանձնեց 4 տլ. 98 ս. խնդրելով իրմէ որ զայն ղրկէ Վիլսոն նախագահին, իբր նուէր Պատերազմի Ֆոնտին։ Տղան կը կոչուի Արթուր Ղազարեան. ասոր քոյրը Վիկտորիա իր ունեցածին 100 առ հարիւրը նուիրեց Ուստրի կարմիր-խաչին։ Ահա գեղեցիկ օրինակներ հայ մանկուրան բարեսրտութեան։ Պատիւ և յարգանք Ցարութիւն Տէր-Ղազարեան (Martin) ընտանեաց։

— Աւոպարեզէն կը տեղեկանանք՝ որ Ֆրեզնոյի մէջ համբաւաւոր և հակայ հայ ըմբիշ Արամ Ցուսէփեան կրցեր է յաղթել ռուս հանրածանօթ և անպարտելի Թոմանոֆ ըմբիշին։

— Ինչպէս որ իտալիոյ զանազան քաղաքներու մէջ կազմուած են զանազան Հայկական Միութիւններ, այսպէս ալ այժմ Բաստուրի մէջ ձեւացաւ նոր միութիւն մը, Մասնախումբ Հայկական Անկախութեան անուամբ, որ մեծաւ մասամբ տեղական ականաւոր իտալացիներէն բաղկացած է. ասոր նախագահն է մեծանուն Prof. Bertacchi.

— Մարսէյլի Արմենիան Օգոստոսի 1 թուով՝ իր գոյութեան 33երորդ տարին կը թեւակոխէ. անվհատ յարատեւութիւն և ոյժ կը մաղթենք։

— Աւանդաւոր փարիզիի մէջէն կը տեղեկանանք որ՝ Ցուլիս 14ի ֆրանսական զօրահանդէսին մէջ՝ ի Բարիզ, ամենէն աւելի նշանաւոր հանդիսացաւ Օտար Լեգէոնը ներկայացնող վաշտը, որուն դրօշակը փուսաւորէրի բացառիկ պատուին ալ արժանացաւ։ Այս հատընտիր հերոսներու վաշտին առջևէն կ'երթային 1ոբս կորովի հայ կամաւորներ, որոնց առնական երևոյթը ջերմ ծափերու արժանացաւ։

— Նմանապէս նոյն թերթը՝ Թիֆլիսէն ընդունած տեղեկութեան մը համաձայն, վերապահութեամբ կը տեղեկացնէ, որ Ռումանիայէն եկած Հայեր կ'ըսեն թէ Բիւզանդ Քէչեանը այնտեղ մեռեր է բիֆոյէն։

— Անդրանիկի Հայաստանը կը հրատարակէ յօդուած մը Վանեցի Ղազար Աւետիսեան հայ գերիին. սա Սիպերիա եղող պատերազմական գերիներէն մէկն է, որ ազատեր է և այս լուրերը կու տայ։ Շատեր թշուառ ստրութեան և պանդխտութեան մէջ՝ անմխիթար և անսփոփ ապրեր են. ոմանք մեռած են՝ յուսահատ և սրբատարեկ դիրքի մէջ։ Չի կար ոչ մէկ հայ որ անոնց մասին օգնութեան մը ձեռնարկէր։ «Այսպէսի դառն ցաւագնչի ոսկ անմխիթար կը սպասէինք, կը գրէ նա, երբ յանկարծ Մոսկուայի Կոմիտէ պր. Գէորգ Գէնջեգեան, հրեշտակի մը նման երևաց մեզ, ընկերներ, ի՛նչպէս էք, ի՞նչպէս կ'ապրիք, հարցուց։ Երկուսուկէս տարուան միջոցին, անդրանիկ այցելուն էր նա և առաջին հարց. ի՞նչ զարմանալի բան, նրա մէն մի բարբառը կը պարունակէր հարիւրաւոր մխիթարութիւն, և մէկ ժամ խօսելէ վերջ՝ բոլորովին թեթեցան մեր ցաւեր։ Նա մեզ խոստացաւ և ազատեց»։ Կը հաղորդէ նոյն անձը թէ ուրիշ շատ գերիներ կ'աշխատին չարաչար և ծրի, մինչդեռ աւստրիական և թրքական գերիներ կ'աշխատին իրենց կամքով և կը ստանան դրամ։ Իրեն հետ ազատած են 142 հոգի՝ չնորհիւ պր. Դ. Գէնջեգեանի։

— Լոնտոնի մէջ կատարուած Ցունիս 13ի Հայաստանի օրուան՝ որուն նկարագրութիւնն ըլած ենք Ցունիս-Ցուլիս Բազմավէպին մէջ, զուտ հասոյթն եղած է անգլիական 1000 ոսկի։

— Ամերիկանայող Ազգային Ինքնապաշտպանութեան Միութեան ատենապետ պր. Մ. Սվազլեան և The New Armenia խմբագիր պր. Արշակ Մահտէսեան, Նիւ-Եօրքի Քաղաքական Գիտութեանց Ակադեմիոյ անդամ հռչակուած են։ Մեր սրտագին չնորհաւորութիւնները կ'ուղղենք ազգային երկու գործիչներուն։

— Վիրաժնուն Բարիզի նոր ամսաթերթէն կը տեղեկանանք որ՝ Կատակերգութեան ճիւղին երկրորդ մրցանակ ստացած է պր. Ժ. Շահին, Էտկար Շահինի հօրեղբօրորդին, որ փայլուն ապագայ խոստացող արուեստագէտ մըն է և Օտէոնի ազգային թատրոնին մէջ արդէն ընդունուած է փարիզի գերեզ կատարելու համար։ Էր Քէյի թերթին մէջ Վիքթոր Պալ կը գրէ՝ «պր. Շահին մրցողներուն մէջ միակն էր որ nature մը յայտնուեցաւ. կը զարմանամ որ առաջին մրցանակը իրեն չեն տուեր»։

— Վեհ. Կաթողիկոսը, գիմումի ստացած ըլլալով ժամանակաւոր կառավարութենէն Հայերու մէջ կազմակերպելու «Ազատութեան փոխառութեան» համար բաժնեգրութիւն, առաջարկած է թեմականներուն տարածել այս փոխառութիւնը ժողովրդին մէջ և ինք յանուն Էջմիածնայ Միաբանութեան մասնակցած է 100,000 ռուբլիով։ Մոսկուայի Հայկ. Քոմիթէն ալ նոյն նպատակով կոչ մը ուղղած է թերթերուն, իր նախագահ Մամիկոնեանի ստորագրութեամբ, յայտնելով միանգամայն որ Մոսկուայի հայոց մէջ բաժնեգրութիւնը սկսած է արդէն և առաջին օրն իսկ Մոսկուայի հայերը արձանագրուած են 11,000,000 ռուբլի։

digitised by A.R.A.R.@